

Կարծիք

Լեզուապահպանական հարցեր

Խնդիրը վերաբերում է **արեւմտահայերէնի պահպանմանը**, հայերէնի ա՛յն լեզուաճիւղին, ինչը *Բունեսկոն* դասել է անհետացող լեզուների շարքին: ԲմԿարծիքով Լեզուապահպանական յանձնախումբը պետք է *փաստարկի*, թե՛

Ինչու՞ պետք է պահպանել արեւմտահայերէնը.

Ա) Դա հայերէնի աշխարհաբարի երկու գրական լեզուաճիւղերից մէկն է, ժամանակային առումով՝ **արեւմտահայերէնը մեր առաջին աշխարհաբար գրական լեզուն է**, որով խօսել եւ խօսում է ազգի մի մեծ հատուածը.

Բ) Այդ գրական լեզուն (ի տարբերութիւն արեւելահայերէնի) **օգտագործուել է մեր պատմական հայրենիքի տարածքի գերակշիռ՝ աւելի քան 7/10 մասում** եւ գոյատեւել ու օգտագործւում է ցայսօր.

Գ) *Միջազգային հանրութիւնը* հայոց պատմութեան, մշակոյթի եւ ազգային արժեհամակարգի այլ բաղադրիչների մասին **հիմնականում տեղեկացուել է արեւմտահայերէն գրական լեզուով**.

Դ) **Արեւմտահայերէնի շնորհիւ** է պահպանուել եւ մինչեւ մեր օրերին հասել մեր աւանդական համազգային (դասական) **միասնական ուղղագրութիւնը**, նաեւ *դրանով են կապուել աշխարհում ցրուած մեր ազգի տարբեր հատուածները, տարբեր սերունդները, տարբեր ժամանակների մշակութային արժէքները*.

Ե) **Արեւմտահայերէնով** ստեղծուած ճոխ ու համաշխարհային մակարդակով **ստեղծուած գրականութիւնը, գիտական եւ պատմական աշխատութիւնները** (ստեղծուած Մխիթարեան եւ աշխարհում ցրուած տարբեր հայազիտական այլ կենտրոնների կողմից) **կազմում են մեր ազգային արժեհամակարգի շատ կարեւոր մասը**, որի **կորստեան դէպքում աւելի քան կիսով չափ կ'աղքատանար մեր ինքնութեան պատմական ու մշակութային դէմքը**: Հետեւաբար շատ կարեւոր է նաեւ այն, որ արեւելահայերը կարողանան բնագրով կարդալ եւ հասկանալ արեւմտահայերէնով աւանդուած ազգային արժէքները:

Զ) *Կորցնելով արեւմտահայերէնը, մենք կը կորցնենք այդ լեզուն կրողներին՝* այսօրուայ սփիւռքահայութեանը, մեր հայրենիքի հօգրացման հիմքերից մէկին, **աշխարհին ներկայացուող հայ դատի իրաւասփրոջը**:

Որո՞նք են այսօր արեւմտահայերէնին սպառնացող վտանգները: Այս լեզուաճիւղի պահպանման հարցը լուծելիս *յանձնախումբը* ստիպուած է **նկատի առնել՝**

1. Սփիւռքի երկարակեցութեան անկանխատեսիլ լինելը (քանի՞ սերունդ կը պահպանի իր հայեցիութիւնը), մանաւանդ հաշուի առնելով **հայ ընտանիքի՝** ներկայիս նկատուող ակնյայտ **անկայունութիւնը՝** խառն ամուսնութիւններով ձուլման արագացումը:

2. Նախկին գրագէտ եւ մաքուր արեւմտահայերէն գրող ու խօսող **սերունդի աստիճանական անհետացումը** եւ փոխարէնը **նոր սերունդի յայտնուելը**, ովքեր վարժուել են խօսել ու գրել ֆինանսական պատճառներով սրբագրիչներ չունեցող սփիւռքահայ մամուլում ու հրատարակչութիւններում տիրապետող *ոչ միակերպ, աղճատուած* արեւմտահայերէնով՝ յաճախ նաեւ Հայաստանից գաղթածների **բարբառային հայերէնի խառնուրդ ժարգոնով:**

Այս տագնապալի վիճակը թելադրում է արեւմտահայերէնի պահպանման հետեւեալ քայլերի իրականացումը, ինչի համար երկրում կան պատրաստի կադրեր: **Առաջին քայլով՝**

Արեւմտահայերէնը «բնակեցնել» յարատեւող հայրենիքում. հայաստանահայի ականջը վարժեցնել արեւմտահայերէնին. այդ նպատակով առաջին հերթին սկսել՝

-- տեղեկատուական միջոցներով բազմիցս **հաղորդուող լուրերի մի մասը եւ ազգային թեմաներով տրուող որոշ (կրկնուող) ծրագրեր ներկայացնել նաեւ արեւմտահայերէնով.**

-- Յաճախակի **հնչեցնել արեւմտահայ արձակի ու բանաստեղծութեան լաւագոյն նմուշները եւ թատրոններում** յաճախակի եւ **անխաթար հնչողութեամբ** ներկայացնել արեւմտահայերի (սփիւռքահայերի) գործերը.

-- Մամուլի համար **սփիւռքից գրուած յօդուածները**, ինչպէս նաեւ արեւմտահայ (սփիւռքահայ) **գրողների գործերը տպագրել առանց արեւելահայերէն թարգմանելու:**

-- *Դասական Սփիւռքի դպրոցների ուսուցիչների վերապատրաստումը հայրենիքում եւ երեխաների ուսուցումը («Արի տուն» ծրագրով) տանել միայն արեւմտահայերէնով:*

Երկրորդ քայլով՝

-- Յաջորդ տարուանից, ըստ հնարաւորութեան, մի քանի **աւագ դպրոցներում սկսել արեւմտահայերէնի ուսուցումը՝** օգտուելով մերձաւոր արեւելքի դպրոցներից գաղթած ուսուցիչների ծառայութիւններից: **Հետագայում դա տարածել բոլոր աւագ դպրոցներում:**

-- Միաժամանակ , **արեւմտահայերէնի ուսուցիչների** պատրաստման համար ծրագրել Երեւանի Պետական եւ Մանկավարժական համալսարաններում համապատասխան բաժանմունքների (ֆակուլտետների) ու **դասընթացների ստեղծումը** այն հաշուով, որ այդ շրջանաւարտները գիտենան նաեւ սփիւռքում գործող **աւանդական ուղղագրութիւնը** եւ կարողանան պայմանագրային հիմունքներով դասաւանդել հայրենիքում ու սփիւռքում:

Թոյլ տուէք նկատել, որ այս քայլերը կարելի է համարել նաեւ մերձեցմանն ուղղուած քայլեր:

Մայրենիի ուսուցումը սփիւռքի դպրոցներում բարելաւելու համար կարելոր է՝

Առաջին քայլ

---Մէկօրեայ դպրոցներում ուսուցման ծրագրերը չխճողել քերականական բարդ կանոններով (ինչի պատճառով աշակերտները խուսափում են հայերէնի դասերից)։

---Ուսուցումը տանել միայն հայերէնով, բացատրելով նաեւ տուեալ երկրի լեզուով (Ցաւօք, եկեղեցին արարողութիւնները, քարոզը եւ կրօնի դասերը նոյնպէս հիմնականում օտար լեզուով է անում)։

---Սփիւռքի համայնքներում անջատ-անջատ գործող եկեղեցական երկու հաստատմաների դպրոցներում զգացում են ուսուցիչների պակասի եւ դասարանները աշակերտներով համալրելու խնդիրներ։ Մինչդէռ, ըստ տեղի հարմարութեան, անկախ եկեղեցական պատկանելութիւնից, *համայնքի այդ դպրոցների՝ մի շէնքում միացնելու շնորհիւ կը լուծուեն թերբեռնման հետ կապուած դժուարութիւնները։ Դրա համար կարելի է նոյնիսկ համայնքային կրթական մի մարմին ստեղծել՝ երկու կողմերի ներկայացուցիչներով։ Սա նաեւ կարելոր է առաջին քայլը կը լինի սփիւռքի ներսում միասնականանալու հարցում։*

---Ընդունել համահայկական հռչակագիր՝ համայնքային եւ եկեղեցական միջոցառումները՝ ժողովներ, զեկուցումներ, հորելեաններ, տոնախմբութիւններ եւ այլն, կատարել միայն հայերէն լեզուով կամ զուգահեռ թարգմանութեամբ։

Այս հարցերով կարելի է անմիջապէս զբաղուել՝ մասնակից դարձնելով համայնքի ժողովրդին

Երկրորդ քայլ (օժանդակութիւն դպրոցներին) --

--Սփիւռքում որակեալ կադրերը (մանաւանդ մերձաւոր Արեւելքից եկած) ցածր վարձատրման պատճառով հրաժարուում են ուսուցչութիւնից, իսկ ուսման բարձր վարձի պատճառով էլ ծնողները (յատկապէս բազմազաւակ) գերադասում են իրենց երեխաներին միայն տեղական («պետական») դպրոցներ ուղարկել։ Թերեւս հարկ կը լինի լուծել տուեալ երկրի (օտարալեզու) դպրոցներում թոյլատրել հայ ուսուցիչներին՝ հայ երեխաների համար մայրենին դասաւանդել՝ վարձատրուելով տեղի ուսուցիչներին հաւասար։ Սա հայրենի կառավարութեան եւ դիւանագետների գործը պէտք է լինի։

---Սփիւռքում երեխան արդէն 2-3 տարեկանից սկսում է խօսել օտար լեզուով եւ դա սովորում է ոչ թէ ծնողներից, այլ՝ **մուլտֆիլմերից**։ Հարկ է մտածել նրանց համար այդ ֆիլմերը մի որեւէ ալիքով այդ երկրում մշտապէս հաղորդել **հայերէն թարգմանութեամբ**։

Երկրորդ քայլում նշուած այս հարցերը կարող են լուծուել **բարերար կազմակերպութիւնների ու անհատների օգնութեամբ**։ Ի վերջոյ սփիւռքի միակ խնդիրը հայապահպան դպրոցներ ունենալն է։ Ժամանակն է, որ **սփիւռքը պահպանելու նպատակով սփիւռքի դպրոցների համար ստեղծել համահայկական կրթական հիմնադրամ (ֆոնդ)։**

Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման հիմնախնդիրը

Այս յանձնախումբը երկու գրական լեզուաճիւղերի մերձեցմանը պէտք է մօտենայ ա) Որպէս ո՛չ թէ հերթական քայլի, այլ որպէս **համագգային կարեւորութեան գերակայ խնդիրներից մէկի** եւ որպէս **ազգային գաղափարախօսութեան մէջ լեզուական պետական քաղաքականութեան մշտական հայեցակարգի**: Հարցի լուծման համար իբրեւ ելակէտ է ծառայում երկու լեզուաճիւղերի հաւասարութեան, եւ մէկը միւսի մէջ չլուծուելու պայմանը, նաեւ պետականօրէն հաւասար պաշտպանութիւն վայելելը: Խնդիրը քննարկելիս, երբեմն (ըստ Ամենակ Եղիայեանի) **հարկ կը լինի լեզուի գրաւորի միակերպութիւնը գերադասել լեզուի ճշգրտութեանը գերի լինելու սկզբունքից՝ պակասեցնելու համար գրաւորի սխալագրութեան հաւանականութիւնը** (նպատակը արդարացնում է միջոցները):

Առաջին քայլ

Ա) Մեր լեզուի երկու գրական ճիւղերի **բառապաշարները միասնականացնել** եւ հաւասարաչափ օգտագործել դպրոցներում ու առօրեայ բանաւոր խօսքում՝ **հարստացնելով ընդհանուր լեզուն** եւ **արտայայտամիջոցների հնարաւորութիւնը**: Դպրոցներում ուսուցել եւ բառարաններում (կամ առցանցում) մէկտեղել երկու ճիւղերում եղած նոյնիմաստ (հոմանիշ) բառային բոլոր տարբերակները:

Բ) Լուծել անուանումների **միակերպ գրութեան հարցը**, այն է՝

--Վերացնել Աստուածաշնչից մնացած՝ **օտար անձնանունների Ե-է երկակի գրելաձեւերը**. օրինակներ՝ Երուսաղեմ-Եղեմ, Եզեկիել-Միքայել, Բարսեղ-Սամուէլ, Արսեն-Ներսէս կամ՝ Արմէն- Յաբէթ, Ռուբէն-Մուշեղ: Կարելի է համաձայնուել Լիբանանահայ հայերէնագէտ մտաւորական Արմենակ Եղիայեանի հետ՝ **Եւրոպական Է գիրը հայերէնում (բառամիջում) գրել միայն Ե-ով՝** Եղիսաբէթ, Ռոբերտ, Արտեմ, Մակբէթ, Ժանէթ եւ այլն:

-- Միասնականացնել **օտար տեղանունների Կ-Գ երկակի գրելաձեւերը (լատին C գիրը)**.

Canada -Կանադա- Գանադա (Քանադա), California-Կալիֆորնիա-Գալիֆորնիա (Քալիֆորնիա), Carolina-Կարոլինա- Գարոլիմա (քարոլայն): Այս հարցում կարելի է որպէս բացառութիւն թողնել արդէն նուիրականացած անունները՝ օրինակ՝ *Կիլիկիա- Cilicia, կիտրոն-citron, Կիպրոս-Cyprus, կեսար-caesar, կրկես-circus* եւ այլն:

--**Կանոնարկել լատնական W-V եւ հայերէն Ու-Վ գրերի միակերպ գրելաձեւը**.

Տերմինաբանական տեղեկատուն Վիլսոն եւ Վոլտեր անունները առաջարկում է գրել **Ուիլսոն** եւ **Ուոլտեր** (առաջարկը ճիշտ է), սակայն նոյն տեղեկատուն հակասելով ինքն իրեն առաջարկում է՝ **Վ-ով գրել Washington-Վաշինգտոն, William-Վիլյամ, whisky-վիսկի** գրելաձեւերը : Մինչդեռ ամերիկացիք (եւ արեւմտահայերը) **արտասանում եւ գրում են՝ Ուաշինգթոն** (որովհետեւ գրւում է՝ *Washington* է ոչ թէ՝ *Vashington*), **Ուիլյամ** եւ **ուիսկի** ճիշտ ձեւերը (որոնք նոյնպէս սկսւում են **W-ով- ոչ թէ՝ V-ով**):

Գ) Երկրորդ քայլով վերացնել թոյլատրուած այլ երկակի գրելաձեւերը.

Այդպիսի բառերից մէկը գրաբարում կամ Հայկազեանում համարում է **ռամկական**: Օրինակ՝ գրաբարում եւ արեւմտահայերէնում **արձագանգ** է գրւում, իսկ արեւելահայերէնում՝ **արձագանք** (ինչը գրաբարը համարում է ռամկական ձեւ): Եթէ նկատի առնենք, որ **գրաբարի ռամկական** համարուածը այսօրուայ **աշխարհաբարն է**, ուրեմն կա'մ արեւմտահայը կարող է գործածել **արձագանք** ձեւը (**ք**-ով), կա'մ արեւելահայը ընդունի **արձագանգ** ձեւը (**գ**-ով): *Այսինքն դրանցից մէկն ու մէկը կարելի է թողնել ընդհանուր*: Մի այլ օրինակ. **Գունդ** գրական միակ բառը գրաբարում եւ արեւելահայերէնում օգտագործւում է այդ ձեւով (**Դ**-ով), իսկ արեւմտահայերէնում գրւում է նաեւ **գունտ** ձեւով (նոյնիսկ ռամկական չի համարւում), այդ ձեւից (**տ**-ով) արեւմտահայերը պէտք է հրաժարուն :

Յանուն միակէպ գրութեան՝ ճշգրտութիւնը գոհելու երկու օրինակ ցոյց տանք: Գրաբարում եւ Հայկազեանում ունենք **գմբէթ** բառը, որը գրւում է **Է**-ով. սակայն այդ բառը մնացած բառային փոխակերպութիւններում գրւում է **Ե**-ով՝ *գմբէթակիր, գմբէթագարդ, գմբէթածածկ*: Մերձեցմամբ զբաղուող յանձնախումբը կարող է մի փոքր շեղուելով որոշել՝ **Ե**-ով գրել նաեւ **Գմբէթ** բառը՝ **գմբէթ**: Նոյն ձեւով գրաբարում ունենք **Ճիշդ** բառը, ինչը պահպանուած է եւ գործածւում է արեւմտահայերէնում: Այս բառը նոյնպէս տարբեր փոխակերպութիւններում գրւում է **տ**-ով՝ *ճշմարիտ, ճշգրիտ, ճշտախօս եւ այլն*: Սա նոյնպէս կարելի է գրել **տ**-ով՝ **Ճիշտ**, մանաւանդ որ, հայերէնում արտասանական դիրուրեան պատճառով **շդ**-ն դարձել է **շտ**՝ *հաշտ, հեշտ, դաշտ, միշտ, վիշտ, աւելացնենք նաեւ՝ Ճիշտ*-ը:

Միակերպութեան համար արեւմտահայերէնում Ռ-Օ երկակի գրելաձեւերի հարցը.

Ո՞րն է ճիշտը՝ *Կարո-Կարօ, Մարո-Մարօ, Համո-Համօ, Դրո-Դրօ, զերո-զերօ*: Ճիշտ են *առաջինները՝ Ռ-ով*, որովհետեւ **անունների դէպքում Ռ-ից հետո յ չի գրւում** (ինչպէս՝ անբարոյ), իսկ **Օ** գրելու դէպքում բացակայում է դրա գրաբարեան հիմքը՝ **աւ** (**աւուր=օր**):

Դ) Երրորդ քայլով ճշտել մնացած երկակի գրելաձեւերի հարցը

Այս հարցում հեշտութեան համար օգտակար է ուսումնասիրել Արմենակ Եղիայեանի՝ «Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց» աշխատութիւնը, ուր բերուած են տիպիկ օրինակներ՝ *բզքտել-բզկտել, փնտռել- փնտրել, բաղդ- բախտ* եւ այլն, որոնք այնքան տարածուած են արեւմտահայերէնի գրաւորում: Յուսանք, որ գրուած առաջարկները կարող են օգտակար լինել վերոյիշեալ յանձնախմբերին: